ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 42-Ն

09 սեպտեմբերի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N -86-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29 և 33 հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի նարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի նարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի հաստատման մասին» N 86-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Մարալիկի քաղաքապետարանի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Արթիկի տարածքային հարկային տեսչության միջև 05 մարտի 2010 թվականին կնքված վարձակալության պայմանագիրը 07 հուլիսի 2011 թվականին դադարեցվել է՝ համաձայն կողմերի համատեղ դիմումի, 2011 թվականի բյուջեի վարչական մասի 7415 հոդվածից (այլ գույքի վարձակալությունից եկամուտներ) պակասեցնել 180000 (մեկ հարյուր ութսուն հազար) դրամ:
2. Հաշվի առնելով, որ Մարալիկի համայնքային երաժշտական դպրոցի ժող գործիքների խմբում սովորող աշակերտների համար չի կատարվել համապատասխան փոխանցումը, համայնքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի 7422 հոդվածից (օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող վճարներ) պակասեցնել 1092000 (մեկ միլիոն իննսուներկու հազար) դրամ:

3. Համապատասխանաբար 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից պակասեցնել 1272000 (մեկ միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար) դրամ:
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի եկամուտները՝ «Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ» 1392 տողին ավելացնել ընդամենը 1000000 (մեկ միլիոն) դրամով:
5. «Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ» 1392 տողից 1000000 (մեկ միլիոն) դրամ հատկացնել 04.5.1.51 դասակարգման (ճանապարհային տրանսպորտ) 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին, այդ թվում 500000 (հինգ հարյուր հազար) դրամ հատկացնել երրորդ եռամսյակին, 500000 (հինգ հարյուր հազար) դրամ՝ չորրորդ եռամսյակին :

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

09 սեպտեմբերի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 43-Ն

09 սեպտեմբերի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից Մարալիկ քաղաքի Բարեկամության փողոցի հարևանությամբ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003--0020) 400 քառակուսի մետր հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:
2. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 80 % -ի չափով՝ 168960 (մեկ հարյուր վաթսունութ հազար ինը հարյուր վաթսուն) դրամ:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

09 սեպտեմբերի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 44

09 սեպտեմբերի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 77 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 26 կետի

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 10 դեկտեմբերի 2010 թվականի թիվ 77 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման N 2 հավելվածի 4-րդ պարբերության (տեխնիկական սպասարկման կազմ) 13-րդ կետի աղբաթափման մեքենայի վարորդ-մեխանիկի հաստիքի դիմաց նշված 50000 (հիսուն հազար) բառերը փոխարինել 55000 (հիսունհինգ հազար) բառերով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

09 սեպտեմբերի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 45

09 սեպտեմբերի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՀԱՃԱԽՈՂ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԸ 50 %-ՈՎ ՁԵՂՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկ հաճախող երեխաների ծնողների դիմումները՝ ընտանիքից 2-ական երեխա հաճախելու վերաբերյալ, նկատի ունենալով նրանց ընտանեկան ծանր սոցիալական վիճակը և ելնելով մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության զարգացման շահերից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 5 կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկ հաճախող 2011 թվականի ծնողական մուծումներից զեղչված երեխաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

09 սեպտեմբերի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 45 ՈՐՈՇՄԱՆ

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅԱՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՀԱՃԱԽՈՂ ԾՆՈՂԱԿԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԸ 100 % ԵՎ 50 %-ՈՎ ՁԵՂՉՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ձեղչված տոկոսները	Կարգավիճակը
1	Գրիգորյան Հովհաննես Արթուրի	50	բազմազավակ
2	Ավուշյան Սուրեն	100	սոցիալապես անապահով
3	Սիմոնյան Մամիկոն Սայաթի	50	սոցիալապես անապահով
4	Մկոյան Վանիկ Ալիկի	50	ընտանիքից 2 երեխա
5	Սուքիասյան Նորայր Հակոբի	50	ընտանիքից 2 երեխա
6	Գևորգյան Սուսաննա Գարեգինի	50	ընտանիքից 2 երեխա
7	Պետրոսյան Սվետլանա սերգոյի	50	ընտանիքից 2 երեխա
8	Բաղդասարյան Սելեն Մակարի	50	ընտանիքից 2 երեխա

9	Պողոսյան Անյուտա Սիմավոնի	50	միայնակ մայր
10	Գրիգորյան Սեդա Կամոյի	50	ընտանիքից 2 երեխա
11	Բաղդասարյան Կարինա Ստեփանի	50	ընտանիքից 2 երեխա
12	Սահակյան Վիգեն Սերոբի	50	սոցիալապես անապահով
13	Դարբինյան Ամալյա Գրիգորի	50	սոցիալապես անապահով
14	Սարգսյան Մոնիկա Հրաչի	50	սոցիալապես անապահով
15	Դարբինյան Սուսաննա Անդրանիկի	50	սոցիալապես անապահով
16	Աղաբաբյան Շուշանիկ Ռուստամի	50	սոցիալապես անապահով
17	Հակոբյան Ալբերտ	50	միայնակ մայր
18	Գալստյան Մարիամ Սմբատի	50	ընտանիքից 2 երեխա
19	Սահակյան Անդրանիկ Շիրակի	50	ընտանիքից 2 երեխա
20	Հարությունյան Մարիամ Արտյոմի	50	սոցիալապես անապահով
21	Մաթևոսյան Սոֆիա Կորյունի	50	սոցիալապես անապահով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 46

09 սեպտեմբերի 2011 թվական

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի 5-րդ մասի և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարար հարգարժան Վ. Վարդանյանին առաջարկություն ներկայացնելու մասին գրությունը

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 176-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի

Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն իրավասություն վերապահելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

2. Առաջարկել որոշման նախագծի 2-րդ կետում ավելացնել 3-րդ ենթակետը հետևյալ բովանդակությամբ:

   1) Նշված շենքերի հետագա տնօրինման, այնտեղ բնակվող անձանց առողջապահական, կենցաղային, տրանսպորտային և այլ բնույթի սոցիալական հարցերի լուծման նպատակով Մարալիկ քաղաքում ստեղծել պետական ոչ առևտրային կազմակերպություն, համապատասխան կառույցներով և Մարալիկի համայնքային սեփականություն հանդիսացող Մոնոլիտ շենք N -25, Մոնոլիտ շենք N -33, Մոնոլիտ շենք N -34 անհատույց օգտագործման իրավունքով հանձնել նշված կազմակերպությանը, որպեսզի հետագայում սահմանված կարգով կազմակերպությունը տրամադրի անօթևան միայնակ տարեցներին և բնակարանի կարիք ունեցող սոցիալական այլ խմբերին պատկանող անձանց:

   2) Կամ նշված շենքերի հետագա տնօրինման, այնտեղ բնակվող անձանց առողջապահական, կենցաղային, տրանսպորտային և այլ բնույթի սոցիալական հարցերի լուծման նպատակով Մարալիկի համայնքային սեփականություն հանդիսացող Մոնոլիտ շենք N -25, Մոնոլիտ շենք N -33, Մոնոլիտ շենք N -34 անհատույց օգտագործման իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հետագայում սահմանված կարգով անօթևան միայնակ տարեցներին և բնակարանի կարիք ունեցող սոցիալական այլ խմբերին պատկանող անձանց տրամադրելու նպատակով:

3. Որոշման նախագծի 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

   Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Շիրազի փողոցի թիվ 25,33 և 34 շենքերի բնակարանները սահմանված կարգով բաշխում և հատկացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ հանձնաժողովի կազմում ընդգրկելով նաև Մարալիկ համայնքի ղեկավարին կամ նրա կողմից լիազորված անձին:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

09 սեպտեմբերի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 47-Ն

09 սեպտեմբերի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարալիկի քաղաքապետարանի , Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և անասնաբույժներ Ռաֆիկ Կարապետյանի ու Խաչիկ Էլամիրյանի միջև 01 հուլիսի 2011 թվականի (ԱԱՎ – 1702 և ԱԱՎ - 1716) կնքված եռակողմ պայմանագրերը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7421 հոդվածին (պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ) երրորդ եռամսյակից ավելացնել 600000 (վեց հարյուր հազար) դրամ:

Համապատասխանաբար 2011 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 08.2.1.51 դասակարգման (գյուղատնտեսություն) 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին ավելացնել 600000 (վեց հարյուր հազար) դրամ:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

09 սեպտեմբերի 2011 թվական

ք. Մարալիկ